

ԴՐՈՒԱԳ Ա.

Ա. Ժամանակ կենաց Լեւոնի եւ որ ինչ յառաջ քան զպայազատելն

Լեւոն՝ որ ՚ի կարգի համանուն պայազատաց Ռուբինեանց Երկրորդ է, եւ ՚ի թագաւորս՝ Առաջին, սերնդեամբ՝ հինգերորդ ազգ է ՚ի տոհմապետէն Ռուբինէ, յորմէ աւելի քան զդար մի ժամանակի անցեալ էր մինչեւ յիւրն պայազատութիւն (1080-1187): Տեսաք ՚ի Դրուագի նուաճմանն Կիլիկիոյ ՚ի նախորդաց սորին՝ քանի՜ երկբայ եւ զաղփաղփուն էր բաղդ նոցին, թէպէտ եւ արանց հզօրաց եւ մահուչափ ճգնողաց, ՚ի միջի մեծամեծ եւ ռիւերիմ պետութեանց, կայսերացն ասեմ Յունաց, սուլտանաց եւ ամիրայից Թուրքաց, եւ եկամուտ փառասէր Փռանկաց. եւ թէ քանի՜ցս վտանգեալ՝ իբրեւ ՚ի մագկոյնն հասանէր նորատունկ տարրոսական տունն Հայոց, մանաւանդ յաւուրս հաւուն իւրոյ հոմանուան, եւ հօրեղբօրն (Թորոսի Բ), եւ իւրոյ իսկ հօրն՝ դժնդակ ջրախարշ զրաւելոյ ՚ի կենաց, ապա եւ ակներեւ եղբօր իւրոյ Ռուբինի Բ, ընդ ձեռամբ եւ գերի անկելոյ Բրնձին Անտիոքայ. որ է ասել, եթէ զրեա թէ ամենեքին նոքա՝ կամ իբրեւ ապստամբք կասկածանօք կային յամուր ապաստանս լերանց, հանապազ զէն ՚ի ձեռին պաշտպանելով անձանց եւ տանց, կամ յանձնառութեամբ գերագոյն իշխանութեան հզօրագունից տերանց՝ իբրեւ ճորտք նոցին կամ լիճք՝ ըստ այնր ժամանակի խօսից: Սովին օրինօք եւ ինքն Լեւոն արար զմուտն յիշխանութիւն, զոր յետոյ քաջօրէն տիրաբար բարձրացոյց, թօթափելով զխէթն եւ զլուծ՝ զՅունաց եւ զՓռանկաց. խորագէտ տեսութեամբ ընծայեալ զինքն եւ գերկիր իւր՝ ՚ի ստուերակերպ լճութիւն հեռաւորի կայսեր Գերմանիոյ եւ յորդեգրութիւն Քահանայապետին Հռովմայ, այլ իսկապէս ինքնագլուխ կալով եւ բացարձակ անուանելով *Թագաւոր Հայոց*. զոր եւ ժառանգեցոյց յաջորդաց իւրոց, միայն *Շնորհօքն Աստուծոյ* այնպէս կոչիլ, եւ ոչ եւս *Հռովմայեցւոց ինքնակալին*՝ որպէս զրէր ինքն յառաջին ամս թագաւորութեանն:

Որպէս ՚ի սկզբանն ազգաբանութեան Ռուբինեանց ցուցաւ, Լեւոն կրսեր որդի է Ստեփանեայ, որդւոյ Լեւոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբինի, եւ եկեաց ամս յիսունեւհինգ՝ յետ տարածամ կենագրաւ լինելոյ հօր իւրոյ. իսկ ընդ բնաւ՝ ոչ է յայտ որքան, բայց վկայի ՚ի ծերութիւն